ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Ք. Երևան «26» հուլիսի 2011 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 23 Ա/Ք

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ԵՎ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2001թ. նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 1121 որոշմամբ՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Հաստատել գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն կիրառական նշանակություն ունեցող հետազոտությունների ծրագրի շրջանակներում կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների նախագծի իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրի ձևը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահի
«26» հուլիսի 2011թ.
N 23 Ա/Ք հրամանի

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N _____

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ԵՎ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղաք Երևան «____» _____ 2011թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե)՝ ի դեմս նախագահ Սամվել Հարությունյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և _____

_____ -ը, ի դեմս տնօրեն (ռեկտոր) _____ -ի
(կազմակերպության անվանումը) (անուն ազգանուն)
(այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), _____ նախագծի (այսուհետ՝ Նախագիծ)
(նախագծի անվանումը)
իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն Պայմանագրով Կոմիտեն պարտավորվում է Նախագծի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել՝ մինչև _____ գումար, որը կազմում է Նախագծի ընդհանուր արժեքի ----%-ը, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Նախագիծն իրականացնել Որոշմամբ և սույն Պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Նախագծով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումների (այսուհետ՝ Միջոցառումներ) կատարման փուլերի ժամկետները որոշվում են առաջադրանքով և օրացուցային պլանով, որոնք սույն Պայմանագրի անբաժանելի մասն են (հավելվածներ 3 և 4):

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Կոմիտեն իրավունք ունի՝

2.1.1. Կազմակերպությունից պահանջել կատարելու սույն Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները.

2.1.2. ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.3. չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն Պայմանագրի 6.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.4. առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Նախագծի իրականացումը, կամ Նախագծի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Նախագծով նախատեսված առանձին Միջոցառումների իրականացման ժամկետները:

գ. իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Նախագծով սահմանված պահանջներին.

2.1.5. սույն Պայմանագիրն օրենքով կամ սույն Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված Միջոցառման արդյունքը Կոմիտեի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Կոմիտեի կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծելու սույն Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները.

2.2.3. Նախագծի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավել երրորդ անձանց.

2.2.4. Կոմիտեի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3. Կոմիտեն պարտավոր է՝

2.3.1. Նախագծով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.

2.3.2. կատարել Նախագծի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել Նախագծով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված Միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը

համապատասխանում է Նախագծի և սույն Պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, Կոմիտեն հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կազմակերպությանը.

2.3.5. ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Նախագծի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. Նախագիծը կատարել անձամբ.

2.4.2. Նախագիծը կատարել Կոմիտեի կողմից հաստատված գիտական Նախագծի առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Կոմիտե հանձնել սահմանված ժամկետում.

2.4.3. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Նախագծով և սույն Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.4. կատարել Կոմիտեի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.5. աշխատանքի սպասվելիք արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին անհապաղ տեղեկացնել Կոմիտե.

2.4.6. Կոմիտե ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում սույն Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում են սույն Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից Նախագծի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ.

2.4.7. իրականացնել Նախագծի շրջանակներում Կոմիտեի, ինչպես նաև համաֆինանսավորող կազմակերպության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.8. սույն Պայմանագրով սահմանված կարգով Կոմիտե ներկայացնել Միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ՝ առանց այլ կազմակերպությունների պատվերների կատարման ընթացքում ստացված գիտական արդյունքների, իսկ Նախագծի ավարտից հետո՝ տարեկան ամփոփ հաշվետվություն՝ դրան կցելով աշխատանքի հանձնման-ընդունման երկկողմ ակտ.

2.4.9. սույն Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Նախագծի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Կոմիտեի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.10. Կոմիտեի կողմից առանձին Միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար, Կոմիտեի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.11. Նախագծի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Նախագծի ֆինանսավորման չափը

3.1. Կոմիտեի կողմից Նախագծի ֆինանսավորման չափը կազմում է _____ ՀՀ դրամ,
(թվերով և բառերով)

որը կազմում է նախագծի ընդհանուր արժեքի ------- տոկոսը, իսկ համաֆինանսավորող կազմակերպության կողմից ֆինանսավորման չափը՝ _____ՀՀ դրամ, որը կազմում է նախագծի ընդհանուր արժեքի -------- տոկոսը:

4. Մոնիթորինգը

4.1. Կոմիտեն Նախագծի իրականացման նախնական, ընթացիկ և ամփոփիչ արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

4.2. Մոնիթորինգն իրականացվում է Կոմիտեի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և կատարվում են առաջարկություններ:

4.4. Կոմիտեն ցանկացած ժամանակ կարող է նախագծի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով նախագծին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

4.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները սկսվում են համաֆինանսավորման ամբողջ գումարի Կազմակերպության կողմից բացված առանձին ենթահաշվին փոխանցումից հետո, Պայմանագրի կնքման օրվանից 20 աշխատանքային օրվա ընթացքում:

5.2. Կոմիտեն վճարում է կատարած աշխատանքի համար մինչև արդյունքը ստանալու անհնարինությունը պարզելը, եթե դա տեղի է ունեցել Կազմակերպությունից անկախ հանգամանքների հետևանքով:

5.3. Կոմիտեն Կազմակերպությանը վճարում է սույն պայմանագրի 3.1 կետով նախատեսված գումարի չափով՝ մինչև _____ ՀՀ դրամ, որն ըստ

(թվերով և բառերով)

եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. 2011 թվականին նախատեսված գումարի մասով՝ 3-րդ եռամսյակում՝ 70 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս, 2012 թվականին նախատեսված գումարի մասով՝ 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Սույն Պայմանագրով և Նախագծով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Կոմիտեն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն են՝

9.2.1. Կազմակերպության կողմից Կոմիտե ներկայացված Նախագծի հայտը.

9.2.2. Նախագծի համաֆինանսավորման գումարի փոխանցումը հավաստող փաստաթուղթը.

9.2.3. Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը (հավելված 1).

9.2.4. Նախագծի նախահաշիվը (հավելված 2).

9.2.5. Առաջադրանքը (հավելված 3).

9.2.5. Օրացուցային պլանը (հավելված 4).

9.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտե

ք. Երևան, Կառավարական տուն 3

Հ/հ 900011033033 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Նախագահ՝ Ս. Հարությունյան

_____

(ստորագրություն)

Կ. Տ.

_____
(կազմակերպության անվանումը)

_____
(հասցեն)

_____
(բանկային վավերապայմանը)

Տնօրեն (ռեկտոր)՝ _____
(անուն ազգանուն)

_____
(ստորագրություն)

Կ. Տ.

Հավելված 1
«_____» _____ 2011թ.
N _____ պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պայմանագրի գնի մասին համաձայնության

_____ նախագծի
(նախագծի անվանումը)

Մենք՝ ներքոստորագրյալներս, ի դեմս ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանի և ի դեմս _____ տնօրեն (ռեկտոր)
(կազմակերպության անվանումը)
_____-ի, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել
(անուն ազգանուն)
«_____» _____ 2011թ. N _____ պայմանագրով աշխատանքի արժեքի վերաբերյալ՝ _____ ՀՀ դրամ գումարի չափով, որը կազմում է Նախագծի ընդհանուր արժեքի _____տոկոսը:
(թվերով և բառերով)

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտե
ք. Երևան, Կառավարական տուն 3
Հ/հ 900011033033 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Նախագահ՝ Ս. Հարությունյան

_____
(ստորագրություն)

_____
(կազմակերպության անվանումը)
_____
(հասցեն)
_____
(բանկային վավերապայմանը)

Տնօրեն (ռեկտոր)՝ _____
(անուն ազգանուն)

_____
(ստորագրություն)

Հավելված 2
«_____» _____ 2011թ.
N _____ պայմանագրի

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ

Նախագծի անվանումը _____

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ (ներառյալ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները, հազար դրամ)									
2011					2012				
Հաստիք	Քանակը	Ամսական	Ամիսների քանակը	Պահանջվող գումարը	Հաստիք	Քանակը	Ամսական	Ամիսների քանակը	Պահանջվող գումարը
1)									
2)									
3)									
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ									

ԱՅԼ ԾԱԽՍԵՐ, այդ թվում		
1. ՍԱՐՔԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ (թվարկել 100000 ՀՀ դրամը գերազանցող բոլոր ծախսերը, հիմնավորվել նախահաշվի մեկնաբանության մեջ)	2011	2012
1)		
2)		
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ		
2. ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ (հիմնավորել նախահաշվի մեկնաբանության մեջ)		
1) տեղական գործուղումների տրանսպորտային ծախսեր		
2) տեղական գործուղումների օրապահիկ		
3) տեղական գործուղումների գիշերավարձ		
4) օտարերկրյա գործուղումների տրանսպորտային ծախսեր		
5) օտարերկրյա գործուղումների օրապահիկ		
6) օտարերկրյա գործուղումների գիշերավարձ		
7) գործուղումների հետ կապված այլ ծախսեր (վիզա կամ այլ վճարումներ)		
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ		
3. ԵՆԹԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ (նշել ենթապայմանագրային համագործակցության բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց, համագործակցությունը մանրամասն նկարագրել նախահաշվի մեկնաբանության մեջ)		

Ենթապայմանագրային համագործակցության վարձավճար

	2011			2012		
Ազգանուն, անուն, հայրանուն	Օրավարձը	օրերի քանակը	Պահանջվող գումարը	Օրավարձը	օրերի քանակը	Պահանջվող գումարը
1)						
2)						
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ						

Ենթապայմանագրային համագործակցության նյութեր և ծառայություններ (Թվարկել 120 000 ՀՀ դրամը գերազանցող բոլոր կետերը և հիմնավորել)	2011	2012
1)		
2)		
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ		
ՎԵՐԱԴԻՐ ԾԱԽՍԵՐ		
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ		

Կազմակերպության ղեկավար _____ _____
(ԱԱՀ) (ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ _____ _____
(ԱԱՀ) (ստորագրություն)

Կ. Տ.

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հավելված 3
«_____» _____ 2011թ.
N _____ պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

_____ նախագծի
(նախագծի անվանումը)

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ ՀՀ ԿԳ նախարարի 2011 թվականի մայիսի 23-ի № 589 Ա/Ք հրաման:
2. Աշխատանքի նպատակը
   _____
   _____
   _____
3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (1 էջի սահմաններում)
4. Աշխատանքի բովանդակությունը (3 էջի սահմաններում)
5. Աշխատանքի արդյունքների ներկայացման ձևը _____

Տնօրեն (ռեկտոր)՝ _____ (_____)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Հավելված 4
«_____» _____ 2011 թ.
N _____ պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ

_____ նախագիծ
(նախագծի անվանումը)

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	վերջնաժամկետը	պահանջվող գումարը (հազ. դրամ)
Ընդամենը						

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտե

_____
(կազմակերպության անվանումը)

Նախագահ՝ Ս. Հարությունյան

Տնօրեն (ռեկտոր)՝ _____
(անուն, ազգանուն)

_____
(ստորագրություն)

_____
(ստորագրություն)